Ալեքսանդր Ծատուրյան

Թե քեզ օտար չէ . . .

Թե քեզ օտար չէ, ո՛վ կույս նազելի,
Այն վառ աշխարհը վառ երազների,
Ուր միայն սիրող հոգին անարգել
Սիրո թևերով գիտե սավառնել.
Թե մատաղ սիրտդ զգում է անհագ
Ծարավ իդեալի, գործելու փափագ.
Թե կրծքիդ խորքում կա մի սրբազան
Անձնուրաց սիրո մաքուր զոհարան.
Ուր միշտ հնչում են անկեղծ, ոգեշունչ
Ե՛վ սիրո աղոթք, և՛ սիրո մրմունջ.
Ա՛ռ քեզ իմ սերը... Իմ մենա՜կ կյանքին,
Եղի՛ր, հա՛յ աղջիկ, ընկեր անմեկին:
Բայց թե քո սրտին խորթ են ու օտար
Սիրո անուրջներ, ցընորքի աշխարհ,
Թե դու զավակ ես փարթամ ու շքեղ
Այն անմիտ կյանքի, ուր միշտ սիրո տեղ,
Փայլում է ոսկին, հնչում է մետաղ.
Ուր կեղծ է և՛ լաց, շինծու և՛ ծիծաղ...
Թե քո օրերն էլ անցնում են, ո՛վ կույս,
Անհոգ, անխորհուրդ և հոգիդ անհույս
Նիրհում է անշարժ, կանգուն ջրի պես,
Կիրք, ավյուն ու խանդ թե ծանո՛թ չեն քեզ,
Գընա՛ , հեռացի՛ր... Ցանկալի՜, անգի՜ն

Դու շքեղ զարդ ես մեծատան կրծքին...